Պետրոս Դուրյան

Կոկոն-ծաղիկք կույսին

Լուսափրթիթ ւ՚անարև
Զույգ մ՚աշխարհներ ես տեսի
Ճառագայթից, բույրերու
Եվ փափկության ու լույսի:

Ո՞հ, չ՚է՞ նոցա պես անբիծ
Իտալական վեհ երկին,
Եթե չ՚ունին աստեղց բույլ,
Ամպ ու կայծակ ալ չ՚ունին:

Ո՞հ, հավիտյան միշտ կոկոն
Կարծես զույգ մը ծաղիկ են,
Բայց նըման կույս սրտերու՝
Կարի քաղցըր կը բուրեն:

Ձեռք կարկառել ս՚աշխարհաց
Ակնախըտիղ ու անտես՝
Հանդուգն ըլլալ է լոկ քան
Ջ՚աշխարհակալն Արտաշես:

Ի՞նչպես արդյոք կերտեց Նա
Լուսագունդներս այս դողդոջ,
Նա աշխարհի քան ըզկերտ՝

Մտածեց ոգի տալն կընոջ:

Կը դողդողան իմ շուրթեր
Հըպիլ սիրո այդ խըռով
Կոկոն-ծաղկանց՝ խամրելու,
Արատելու երկյուղով:

Այլ որ շուրթերն հանդըգնի
Հըպել հրաշից այդ լույսե,
Կ'երդնում յաշխարհն աստեղաց,
Թե նա դա՛ր մը կը ծըծե: